ՎԱՐԱԳԱ ԽԱՉԻ ՏՈՆԸ
(էջ 78-80)

ՎԱՐԱԳԱ ԼԵՌ

Վարագա լեռը գմբեթաձև լեռնազանգված է Վասպուրականի բարձրավանդակում, Վանա լճից 10 կիլոմետր արևելք: Բարձրությունը 3250 մետր է, լանջերը զառիթափ են: Ավանդության համաձայն այս լեռան վրա մի որոշ ժամանակ ապաստանել են քրիստոնյա կույսերը, ովքեր Հռոմի կայսեր հետապնդումից խուսափելով՝ հասնում են Հայաստան և ապաստանում Վարագա լեռան վրա:

Հայ Առաքելական եկեղեցին ունի խաչին նվիրված չորս տոն՝ Խաչի երևում, Խաչվերաց, Վարագա Խաչ և Խաչի գյուտ: Այս չորս տոներից երեքը նշում են նաև քրիստոնեական մյուս եկեղեցիները, իսկ Վարագա Սուրբ Խաչի տոնը հատուկ է միայն Հայ Եկեղեցուն, որը հաստատվել է 653թ., երբ Թոդիկ և Հովել ճգնավորները գտան Քրիստոսի Խաչափայտի մասունքը:

Վարագա Սուրբ Խաչի տոնը նշվում է Խաչվերացից 14 օր հետո, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը հանդիպող կիրակի օրը, այս տարի՝ հոկտեմբերի 1-ին: Եկեղեցական ավանդության համաձայն՝ Դիոդետիանոս (243-313թթ.) կայսեր հալածանքներից խուսափելով՝ Ս. Հռիփսիմյանց կույսերը փախչում են Հայաստան: Կույսերից Ս. Հռիփսիմեն իր պարանոցին կրում էր Քրիստոսի Խաչափայտից մի մասունք:

Ի հիշատակ Վարագա Ս. Խաչի երևման հրաշքի՝ կաթողիկոս Ներսես Գ Տայեցին կարգադրում է հայոց եկեղեցու տոների մեջ ավելացնել Վարագա Սուրբ Խաչի տոնը՝ ի հիշատակ Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերման: Այն վայրում, որտեղ երևացել էին 12 այուները, տասներկու եկեղեցիներ են կառուցում, իսկ այն եկեղեցին, ուր եկավ և հանգեց սուրբ Նշանը, ընդարձակելով նորոգում են և տեղում վանք հիմնում: Տոնից առաջ հնգօրյա շաբաթապահք սահմանում, որը ժողովրդական լեզվով կոչվում է «վանեցիների» պահք:

Ամփոփիչ հարցեր.

1. Որտե՞ղ է գտնվում Վարագա լեռը:
2. Հռիփսիմեն որտե՞ղ էր թաքցրել սուրբ մասունքը:
3. Ինչպե՞ս գտնվեց սուրբ մասունքը:
4. Ովքե՞ր էին այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն ու Հայոց սպարապետը:
5. Հայոց կաթողիկոսն ի՞նչ արեց Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերումից հետո:
6. Ե՞րբ է նշվում Վարագա խաչի տոնը:

Տնային աշխատանք

1. «Վարագա խաչի տոնը», սովորել պատմել/էջ 78-80/
2. ԳՈՒՍ
3. Հետազոտական աշխատանք՝ Խաչի երևում, Վարագա Խաչ, Խաչի գյուտ տոների մասին:
4. Վարագավանքի մասին բերել տեղեկություններ:

Ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան